ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 սեպտեմբերի 2023 թվականի N 1510 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՆԴԻԿԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՆԴԻԿԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սնդիկի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով և համաձայն «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 47-րդ հոդվածի, N 7 հավելվածի X բաժնի, «Սնդիկի մասին» օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի N 1 հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ ԵԱՏՄ մաքսային օրենսգիրք) 7-րդ հոդվածին համապատասխան ապահովել վերահսկողություն սույն որոշման 1-ին

և 2-րդ կետերով սահմանված կարգերով նախատեսված արգելքների և սահմանափակումների պահպանման նկատմամբ:

4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով սահմանված կարգերով նախատեսված արգելքները և սահմանափակումները տարածվում են Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԱՏԳ ԱԱ 2805 40 100 0 և 2805 40 900 0 ծածկագրերին դասվող սնդիկի վրա:

5. Սույն որոշմամբ սահմանված նորմերը չեն տարածվում Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ սնդիկի արտահանման, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման վրա:

6. Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված հարաբերությունների կարգավորման նպատակով սույն որոշման շրջանակներում կիրառվող հասկացությունները կիրառվում են ԵԱՏՄ մաքսային օրենսդրությամբ կամ մաքսային հարաբերություններ կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իմաստներով:

7. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սահմանված կարգով ծանուցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին սույն որոշման ընդունման մասին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից և գործում է վեց ամիս ժամկետով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ